

ԱՄՆ ԳԼՈՒԲԱԼ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՒՅԹԸ

Վահագն Ազյան

Գլոբալացման արագացող տեմպերին զուգընթաց էական փոխակերպումներ են տեղի ունենում ԱՄՆ ռազմավարության համադրությունում (պարադիգմ): Հողվածում փորձ է արվում վերլուծել և նախանշել «Բուշի դոկտրինում» ազդարարված նոր հայեցակարգային և գործնական ուժագծերի բովանդակությունը, համաշխարհային գործընթացներում ԱՄՆ ռազմավարական ներկայության և ներազդեցության ուրվագծերը, ինչպես նաև՝ միջնաժամկետ հեռանկարում այդ փոփոխությունների անդրադարձը միջազգային և տարածաշրջանային անվտանգության բնագավառին:

Ներածություն

21-րդ դարասկզբին միջազգային հարաբերությունների տասնամյակներ տիրապետող համադրությունում էական փոխակերպումներ են նկատվում: Համաշխարհային զարգացման արագացող տեմպերը, միջպետական հարաբերությունների հարթությունում՝ լոյալության և հեղինակության կապերի այլափոխումը, պետական ինքնիշխանության ընկալման բովանդակային ձևափոխումը ուղղակիորեն փոխկապված են սրընթաց մեկնարկ առած գլոբալացման գործընթացի հետ: Միջազգային հարաբերությունների թատերաբեմում նոր, ոչպետականակենտրոն դերակատարների ազդեցության և թվի աճը, հսկայական պաշարներ տնօրինող ցանցային կազմակերպությունները և ընդհանուր առմամբ պետական սահմաններ չճանաչող շարժընթացը զգալիորեն փոփոխել են ժամանակին «դասական» դարձած ռեալիստական դպրոցի կանխադրյալները (անարխիկ աշխարհ, պետական/ազգային շահ, ազգային անվտանգություն և այլն): Դարեր շարունակ բանական համարվող պրագմատիզմի տրամաբանությունը և «բանական դերակատարի» հայեցակարգը արդի իրավիճակում նոր որակ են ստանում: Անդրազգային միտումների խթանումը, անշուշտ, գործուն կերպով անդրադառնում է միջպետական հարաբերությունների «ավանդական ձևաչափին»: Պետական ինքնիշխանությունն այլևս չի ընդունվում իբրև բացարձակ արժեք. միտում, որը սկզբունքորեն պայմանավորված է գլոբալացման համալիր բնույթով:

Այնուամենայնիվ, գլոբալացումը տարաբնույթ անդրադարձ ունի խոշոր տերությունների պարագայում, որոնց նյութական-ուժային և կազմա-

կերպչական ռեսուրսները հնարավորություն են ընձեռում վերջիններին բավականաչափ լուրջ ազդեցություն բանեցնել համաշխարհային զարգացման ուղղությունների վրա: Այս դիտանկյունից՝ աշխարհի տարբեր մասերում ազգային պետությունն առայժմ շարունակում է մնալ քաղաքական պատասխանատվության գլխավոր կրողն ու իրագործողը [1]:

Երկբնեռ անվտանգության մակրոհամակարգի վերացումից հետո, որը ժամանակին հանդիսանում էր համաշխարհային հարաբերական (վերահսկվող) կայունության հիմնասյունը, բազմակենտրոն աշխարհակարգի ձևավորման որոշակի միտումներ ի հայտ եկան: Սակայն դրանք հարատև բնույթ չստացան. ՄԱԿ նախկին գլխավոր քարտուղար Բ. Դալիի կողմից առաջ քաշված «Խաղաղության օրակարգը» տապալվեց՝ գլխավորապես ԱՄՆ հակազդեցության արդյունքում, որն անընդունելի համարեց այդ կազմակերպությանը վերազգային գործառույթներ շնորհելու գաղափարը: Ավելին, որոշ դեպքերում ռազմական ծախսերի և զինված ուժերի քանակական կրճատումը շուտով, ըստ էության, վերածվեց արդի բանակների որակական վերազինման. տեխնոլոգիապես առաջատար երկրների ռազմական զարգացման օրակարգի հիմնական խնդիրներ հաստատվեցին ցանցակենտրոն պատերազմների վարման ռազմավարության մշակումը, արագ արձագանքման ուժերի ստեղծումն ու կատարելագործումը, գիտության նոր ձեռքբերումների արագընթաց ներմուծումը ռազմական բնագավառ:

1. Համաշխարհային քաղաքականության մեջ ուրվագծվող նոր միտումները և «Բուշի դոկտրինի» հիմնական ուժագծերը

Նոր միտումներն առավել առարկայական դրսևորում գտան ԱՄՆ քաղաքականության մեջ. 1990-ական թթ. վերջերից Վաշինգտոնը զգալիորեն մեծացրեց ազգային անվտանգության համար նախատեսված ծախսերը՝ վերազինման լայնածավալ նոր ծրագրի հիմնական նպատակ հռչակելով միջնաժամկետ հեռանկարում ամերիկյան ռազմատեխնոլոգիական գերակայության պահպանումն աշխարհում: Հայեցակարգային մակարդակում շարունակելով հավատարիմ մնալ «ռեալիստական դպրոցի» հիմնադրույթներին՝ ամերիկյան ռազմավարական միտքը չբացառեց հետագա պատերազմների հավանականությունը. ռազմական հզորության շարունակական աճը հռչակվեց ԱՄՆ-ի՝ միակ գերտերության կարգավիճակի ապահովման հիմնական նախադրյալ: Պետության հզորության հենց այդ չափումն էլ ընդունվեց միաբնեռ աշխարհակարգի անկյունաքարը: Դեռ 1997թ. Զ. Բժեզինսկին մատնանշեց այն չորս ասպարեզները, որոնք կոչված են ապահովելու ամերիկյան գլոբալ հզորության հիմքը. համաշխարհային

ռազմական ներկայությունը, տնտեսական և տեխնոլոգիական առաջատարությունը և մշակութային հեգեմոնիան [2]:

Այս համատեքստում զարմանալի չէ, որ փորձագիտական հանրությունը պետական հզորության գնահատման երեք մակարդակներ է մատնանշում՝

- ռեսուրսներ կամ հնարավորություններ,
- ինչպես են այդ հնարավորությունները ներազգային գործընթացների բովում փոխակերպվում գործողության,
- «հզորության արդյունքները» կամ՝ ո՞ր պետությունն է ի վիճակի գերակայել տարաբնույթ իրավիճակներում:

Ռազմավարական գնահատման խմբի (*SAG*) կանխատեսմամբ, որը ներառել է մակրոտնտեսական, ռազմական, տեխնոլոգիական և ժողովրդագրական գործոնների ամբողջությունը պետականակենտրոն մոտեցման շրջանակում՝ 2015թ. դրությամբ ԱՄՆ-ը կպահպանի «համաշխարհային հզորության 20%-ը», Չինաստանն ու Եվրամիությունը՝ յուրաքանչյուրը 14%, Հնդկաստանը՝ 9%, Բրազիլիան, Հարավային Կորեան և Ռուսաստանը՝ 2% [3]: Ելնելով այս կանխատեսումից՝ ակնհայտ է դառնում, որ ԱՄՆ-ը, հենվելով թե՛ իր նյութական հզորության և թե՛ ինստիտուցիոնալ ու կազմակերպչական կարողությունների վրա, ի վիճակի կլինի առավել էականորեն ներազդել համաշխարհային գործընթացների վրա՝ այդ թվում նաև «ոչպետական սեկտոր» ընդհանուր անվանումը կրող ոլորտում:

Դրա հետ մեկտեղ, ամերիկյան արտաքին և մասամբ նաև ներքին քաղաքականությունը արդի փուլում ստիպված է լինելու դիմագրավել որակապես նոր «ոչ ավանդական» մարտահրավերներին: Նախ՝ ի տարբերություն սառը պատերազմի շրջանի, ներկայիս միջազգային հարաբերությունների էությունը կորցնում է երբեմնի ռացիոնալ (բանական) լինելու հատկանիշը: Միջնաժամկետ հեռանկարում ամերիկյան արտաքին ռազմավարության գերնպատակները ներառելու են աշխարհի տարբեր մասերում զարգացող քառտիկ («հակասիստեմային») գործընթացների վերահսկումը կամ, նվազագույնը՝ այդ գործընթացների կանխատեսումն ու «ուղղորդումը»: Այլ խոսքերով՝ ակնհայտ է Վաշինգտոնի ձգտումը մի կողմից՝ «անորոշ ժամանակափուլի» հնարավորությունները առավելագույնս ծառայեցնել իր սեփական հզորացման նպատակին, մյուս կողմից՝ խուսափել «անշրջելի» բացասական փոփոխություններից, որոնք ապագայում այս կամ այն չափով կանդրադառնան ԱՄՆ ազգային շահերին: Երկրորդ՝ «ասիմետրիկ» սպառնալիքների առկայությունը հարկադրում է ամերիկյան ղեկավարությանը վերանայել նախկինում տիրապետող ռազմավարական դրույթները հոգուտ

ավելի ճկուն *modus operandi*-ի որդեգրման: Հատկանշական է, որ ամերիկյան վարչակազմը նոր մարտահրավերները դիտարկում է գլոբալացման համատեքստում, որի պարագայում ԱՄՆ ազդեցության կարողությունները էապես գերազանցում են այլ պետությունների և նրանց միավորումների ազդեցության աստիճանը: Երրորդ՝ ավանդական աշխարհաքաղաքական իրողությունները թեև ձևափոխման փուլում են գտնվում, սակայն աշխարհաքաղաքականության դասական օրինաչափությունները, ներառյալ ուժային հավասարակշռության սկզբունքը, առայժմ ոչ ոք չի վերացրել: Ուստի ցանկացած տերության աճ, որն ի վիճակի կլինի մարտահրավեր նետել ԱՄՆ գլոբալ տիրապետությանը, անկասկած, հանդիպելու է բավականաչափ գործուն հակազդեցության:

Ամերիկյան ռազմավարության հիմնական ուժագծերը, դոկտրինալ և օպերատիվ մակարդակներում տեղի ունեցած գլխավոր տեղաշարժերն իրենց արտահայտությունն են գտնում, այսպես կոչված, «Բուշի դոկտրինում»: Վերջինս, ամերիկյան արտաքին քաղաքականության պաշտոնական փաստաթուղթ չհանդիսանալով, իրականում արտացոլում է ներկայիս վարչակազմում (որոշ վերապահումներով) տիրապետող նեոպահպանողական ընտրանու գաղափարական դիրքորոշումների «միահյուսվածքը»: Ընդ որում, վերջին շրջանում նկատվող դոկտրինալ կարծրացումը միաժամանակ վկայում է այն մասին, որ հանրապետական վարչակազմի արտաքին քաղաքականության կոշտացումը անկասելի բնույթ է ստանում, մինչդեռ միակողմանի միջոցներով «մինչև վերջ գնալու» նպատակադրվածությունն էլ ավելի է ամրապնդվում: 2002թ. ընդունված ԱՄՆ Ազգային անվտանգության հայեցակարգում հստակ հաստատագրվեց, որ ամերիկյան պետության աննախադեպ գերակայությունն արդի աշխարհում «ազատության արգասիքները աշխարհով մեկ տարածելու» պատեհ հնարավորություն է ստեղծում, և «ԱՄՆ-ը ակտիվորեն աշխատելու է հասցնել ժողովրդավարության, զարգացման, ազատ շուկայի և ազատ առևտրի հույսը երկրագնդի բոլոր ծայրերը»: Միննույն ժամանակ, Ջ.Բուշի վարչակազմը ժողովրդավարության տարածումը դիտարկում է որպես հանգուցային տարր ինչպես ահաբեկչության դեմ պայքարում, այնպես էլ ամերիկյան ավելի լայն համատեքստի ռազմավարության իրագործման կարծրապատկերում: Հենվելով ամերիկյան նախագահի հնչեցրած այն թեզի վրա, որ ժողովրդավարության և լիբերալ ինստիտուտների տարածումը համապատասխանում է ԱՄՆ երկարաժամկետ շահերին, Ջ.Բուշի վարչակազմը հստակ պատրաստակամություն հայտնեց վերոհիշյալ նպատակներին հասնելու համար ռազմական ուժ կիրառել երկրագնդի հանգուցային «հենակետերում» [4]: ԱՄՆ ռազմավարական համադրույթում պաշտոնապես ամրագրվեց կանխարգելիչ/կանխորոշիչ գործողությունների դոկտրինը: Այդ կանխադրույթը գործնական քաղաքականության ոլորտում ընդգրկելու անհրա-

ժեշտությունը հիմնավորվեց այն թեզով, համաձայն որի՝ զսպման և «հետմղման» հայեցակարգը ներկա պահին կորցրել է գործնականությունը:

Ընդունելով, որ ԱՄՆ և իսլամական աշխարհի միջև գոյություն ունեցող տարաձայնությունները կրում են «համակարգային» բնույթ, այնուամենայնիվ, ահաբեկչությունն ընկալվում է ավելի շատ իբրև քաղաքական ճնշման արդյունք, այլ ոչ թե տնտեսական ու սոցիալական գործոններով պայմանավորված երևույթ [5]: Ի տարբերություն (և ի դժգոհություն) իրատեսական մոտեցման ջատագովների՝ նեոպահպանողականները գործնական-գաղափարական հարթությունում են դիտարկում քաղաքականության բարոյական բաղադրիչները: Դրա վառ օրինակն է «չարի առանցքում» ընդգրկված երկրների ցանկի գոյությունը (Իրան, Իրաք, Սիրիա, Լիբիա, Հյուսիսային Կորեա), որոնց դեմ պայքարի շարժառիթները կրում են ավելի շատ բարոյական պարտականության և նվազ չափով ռազմական միջոցներով քաղաքականությունը շարունակելու Կլաուզևիցի հիմնական կանխադրույթի բովանդակություն: Այս իմաստով՝ Ջ.Բուշի և վարչակազմի առանցքային դերակատարություն ունեցող այլ գործիչների հաճախակի դիմումներն Աստծուն և նախախնամությանը արտացոլում են «մեծ առաքելության» (մեսիական) այն կանխադրույթը, որի շարժառիթային գործնականացման համար ներկայիս ամերիկյան վարչակազմը ջանք չի խնայում: Ըստ որոշ մասնագետների՝ ԱՄՆ քաղաքականության «մեսիականությունը» արտահայտվում է որպես ամերիկյան քաղաքական մոդելի գլոբալ գերակայության ձգտում» [6]:

Թեև առարկայական հարթությունում աշխարհագաղափարախոսության՝ իբրև *ուճիվերսալ* և սկզբունքային երևույթի, գործնականացումը ԱՄՆ իրական արտաքին քաղաքականության մեջ դժվար է միանշանակ սահմանել և արժևորել, սակայն առկա միտումները հիմք են տալիս ենթադրելու, որ գաղափարախոսական-տեղեկատվական ներթափանցման գործառնությունը նշանակությունը գնալով աճելու է: Անուղղակիորեն այդ մասին է ակնարկել նաև ԱՄՆ պետքարտուղար Ք.Ռայսն իր վերջերս արած հայտարարության մեջ՝ նշելով, որ անցած 60 տարիների ընթացքում Ամերիկան ոչինչ չի ձեռնարկել Մերձավոր Արևելքում ժողովրդավարության զարգացման համար. «Մենք չստացանք ո՛չ ժողովրդավարություն և ո՛չ էլ ազատություն»:

2. Ռազմավարական փոփոխությունների առաջնային ոլորտները

Դեռ 1999թ. հայտարարվել էր, որ «միջուկային զենքն է ԱՄՆ-ի դեմ զանգվածային բնաջնջման զենքի օգտագործումից հանցավոր ռեժիմներին հետ պահելու միակ և ամենակարևոր գործիքը» [7]:

2001թ. դեկտեմբերին հրապարակված ԱՄՆ Միջուկային քաղաքականության հայեցակարգը մատնանշում է միջուկային զենքի հնարավոր օգտագործման 5 շարժառիթ.

- տարածաշրջանային տերությունների կողմից զանգվածային բնաջնջման զենք (ՋԲՁ) օգտագործելու տարհամոզումը,
- համաշխարհային թատերաբեմում մրցակից տերությունների կողմից ՋԲՁ կամ սովորական սպառազինությունների միջոցով հարձակողական գործողությունների զսպումը,
- ճգնաժամային իրավիճակներում ԱՄՆ ազդեցության հզորացումը,
- սովորական պատերազմում ամերիկյան ադետալի կորուստների կանխարգելումը,
- առանձնահատուկ կարողությունների ապահովումը, որոնք հնարավորություն կտան վերացնել խորքային ստորգետնյա նշանակետերը [8]:

Հայեցակարգի մեկ այլ կարևոր եզրահանգումն այն է, որ զուտ միջուկային զենքն իրենով չի կարող համապատասխան պաշտպանություն ապահովել ծագող սպառնալիքներից: Ուստի առաջ է քաշվում «նոր եռյակի» պլանավորման հայեցակետը, որը ներառում է միջուկային և ոչմիջուկային հարձակողական համակարգերը, ակտիվ և պասիվ պաշտպանությունը, ինչպես նաև կենսունակ պաշտպանական ենթակառուցվածքը՝ «լայնածավալ ռազմավարական փոփոխություններին» պատրաստ լինելու համար: Այդ համատեքստում, փաստորեն, տրոհվել է սառը պատերազմի շրջանում գերակայող պաշտպանական դաշինքի (առարկայական սպառնալիք – միասնական պատասխան) տրամաբանությունը՝ փոխարենը առաջին եզր դուրս բերելով կարողությունների վրա հիմնված մոտեցման գործնականությունը [9]: Կարևորագույն տեղ է հատկացվել պաշտպանական և հարձակողական համակարգերի ճկունությանը՝ «ռազմավարական պահուստի» հզորացման միջոցով:

Պաշտպանական բավարարության ամերիկյան ներկայիս մոտեցման արտացոլումն է ռազմավարական ուժերի օպերատիվ պլանավորման համադրություն (ըստ Միջուկային քաղաքականության հայեցակարգի) հնարավոր հարված հասցնելու թիրախների ցանկը, որը ներառում է Հյուսիսային Կորեան, Իրանը, Սիրիան, Լիբիան, Չինաստանը և Ռուսաստանը: Այս ուղեգիծն արտահայտություն է գտնում միջուկային բնագավառին վերաբերող ԱՄՆ վարչակազմի մի շարք կարևոր քայլերում (հակահրթիռային պաշտպանության մասին պայմանագրից դուրս գալու, միջուկային զենքի կիրառման շեմի իջեցման, նոր միջուկային փորձարկումներ անցկացնելու, հարստացված ուրանի ռազմական կիրառման եղանակների հետազոտման և միջուկային զինատեսակների օգտագործման նոր ասպարեզներ գտնելու ուղղությամբ): Արագացող փոխակերպումների հիմքում ընկած գաղափարն այն է, որ ԱՄՆ-ը թևակոխել է ոչնկային մի ժամանակաշրջան, երբ ազգային անվտանգությանը սպառնացող վտանգներն անխուսափելի են, մինչդեռ զանգվածային բնաջնջման զենքը ահաբեկիչների ու «հանցավոր ռեժիմների»

ձեռքում՝ զուտ արդյունավետ «սովորական» սպառազինության նշանակություն ունի: Արդի միջազգային անվտանգության պարամետրերի գնահատման տվյալ համադրությո՞րը ինքնըստինքյան ենթադրում է որոշակի գործողությունների ձեռնարկում՝ լինեն դրանք միակողմանի, թե բազմակողմանի:

2005թ. ամռանը ԱՄՆ պաշտպանության նախարար Դ.Ռամսֆելդը հրապարակեց երկրի անվտանգության առումով մարտահրավեր ներկայացնող չորս տեսակի սպառնալիքների սպեկտրը: Համաձայն Պենտագոնի գնահատման՝ ներկայումս և մոտալուտ ապագայում ԱՄՆ-ը գործ է ունենալու նախնառաջ ոչ մշտական վտանգների կասեցման հետ. ահաբեկիչների հարձակումներ, խռովություններ, քաղաքացիական պատերազմներ, ագրեսիվ ազգայնականության բռնկումներ և այլն: Երկրորդը, այսպես կոչված, «աղետալի սպառնալիքներն» են, երբ ահաբեկիչները կամ «հանցավոր ռեժիմներն» են զանգվածային բնաջնջման գեյք կամ դրանց արտադրության եղանակներ ձեռք բերում: Երրորդ կարգի սպառնալիքները կրում են «ավանդական» բնույթ և վերաբերում են հնարավոր լայնածավալ ռազմական բախմանը՝ աշխարհի այլ կանոնավոր բանակների հետ: Վերջին տեղում են «սասանող սպառնալիքները», որոնք կարող են թուլացնել կամ չեզոքացնել ԱՄՆ գերակայությունն առանձին բնագավառներում: Այս շարքում մատնանշվում են մրցակից երկրների կողմից այնպիսի տեխնոլոգիաների մշակումն ու արտադրությունը, որոնք կարող են հետ թողնել ԱՄՆ-ին նորարարությունների բնագավառում:

Ուշագրավ է, որ Պենտագոնը, առանձնացնելով ահաբեկչությունից տուժած երկրներին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, մատնանշեց զինված ներխուժումների պարտադիր լինելու հանգամանքը: Ըստ Դ.Ռամսֆելդի՝ դրանք «կկրեն ընտրովի բնույթ և կհանդիսանան քաղաքական բանավեճերի առարկա»: Այդ շրջանակի խնդիրները փոխկապակցվածության մեջ են դիտարկվում ԱՄՆ ներքին անվտանգության ապահովման հետ և, հասկանալի է, ենթադրում են կանխարգելիչ միջոցառումների շղթա: Ըստ էության, խոսքն այստեղ որոշ փոխակերպումների ենթարկված «սահմանափակ պատերազմների» հայեցակարգի գործնականացման մասին է: 1990-ական թթ. «սահմանափակ նպատակներով» պատերազմ վարելու կողմնակիցները կանխատեսում էին, որ «մեծ պատերազմի» հավանականության նվազման հետ մեկտեղ՝ նոր ասպարեզ է բացվել ուժային-ռազմական միջոցներով որոշակի քաղաքական խնդիրներ լուծելու համար: Ժամանակին ամերիկյան ռազմական ղեկավարությունը դժգոհություն էր հայտնում նման, ոչ տիպիկ խնդիրները բանակի ուսերին դնելու կապակցությամբ՝ նախընտրելով «ճնշող ուժի» դոկտրինի կենսունակությունը (նրանց թվում էր նաև ԱՄՆ նախկին պետքարտուղար Ք.Փաուելը):

Իրականում «ճնշող ուժի» դոկտրինը, որը հստակ և լայնածավալ գործողությունների առաջնահերթություն է նախատեսում, ամենևին էլ չի

վերացել, այն շարունակ պահպանում է իր գերնշանակությունը ԱՄՆ քաղաքական արտաքին քաղաքական օրակարգի «ռազմավարական պահուստում»: Ըստ էության, հակաահաբեկչական պայքարի պայմանականություններից գուրկ ԱՄՆ գլոբալ աշխարհաքաղաքական շահերը պահանջում են մակրոռեսուրսային լուրջ կենտրոնացում, որտեղ «ռազմավարական փոփոխականները» գործում այլ որակ ունեցող նպատակների շրջանակում: Նույն Պենտագոնի 2005թ. ազդարարած ազգային անվտանգության խնդիրների շարքում մատնանշվում է նաև «աշխարհի խոշոր երկրների ռազմավարական ընտրությունը» ձևավորելու և վերջինի վրա ներազդելու անհրաժեշտությունը:

3. Ուժային ներգրավման առաջնահերթ աշխարհաքաղաքական գոտիները և ԱՄՆ ռեսուրսային բավարարության հիմնախնդիրը

Ամերիկյան ազդեցիկ փորձագետների խմբի եզրակացմամբ՝ մոտակա տարիներին ԱՄՆ ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները բյուրեղանալու են երկու գերխնդիրների իրագործման բովում: Դրանք են՝ Մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական փոխակերպումը և վերջինիս ձևափոխումը Մեծ Մերձավոր Արևելքի, ինչը համապատասխան նախադրյալներ կստեղծի Չինաստանի աճող աշխարհաքաղաքական նկրտումներն ավելի կտրուկ միջոցներով զսպելու ճանապարհին: Ընդհանուր առմամբ, ամերիկյան աշխարհընկալման նոր եզրերը, ինչպես նաև ռազմավարական կանխատեսման արդյունքները փաստում են, որ ԱՄՆ-ը ավանդական աշխարհաքաղաքական շահերի վերանայման փուլում է: Նոր հայեցակետերը միաձուլվում են այն համոզման մեջ, որ միջնաժամկետ հեռանկարում հիմնական սպառնալիքների, բայցև ակնկալվող մեծ ձեռքբերումների «էպիկենտրոնը» տեղափոխվել է Եվրասիա և զարգացող երկրներ: Ընթացիկ փուլում գտնվող ամերիկյան ռազմական վերատեղաբաշխումը Եվրոպայից դեպի Արևելք պայմանավորված է հենց այդ մտահղացմամբ, իրադրությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում այլևս իրական վտանգ չի ներկայացնում ամերիկյան շահերին:

Ներկա դրությամբ առավել կարևոր է որակական հաջողությունների հասնել մերձավորարևելյան տարածաշրջանում, որտեղ ԱՄՆ ռազմական ներկայությունը գերակշռող է: Չնայած դիվանագիտական որոշ քայլերին, որոնք միտված են մեղմելու Մերձավոր Արևելքն ամերիկյան դեղատոմսերով «քաղաքակրթելու» ամերիկյան նպատակալացության կարծրությունը և թուլացնելու այս հարցում միջազգային հանրության բացասական արձագանքը, Վաշինգտոնում լավ են գիտակցում, որ նախանշված գլոբալ ռազմավարության «դրույքաչափերը» չափազանց բարձր են: Մերձավոր Արևելքում անհաջողություն կրելու, այն «կորցնելու» տարբերակը խիստ անբարենպաստ հետևանքներ կարող է ունենալ ԱՄՆ-ի համար. կասասանվի պե-

տության էներգետիկ անվտանգության հիմքը, անհնարին կդառնա նավթի ներկրումից կախված խոշոր երկրների (այդ թվում նաև Չինաստանի և Եվրոպայի) էներգետիկ վերահսկողությունը, քաղաքականացված իսլամի և ահաբեկչության «միաձուլվածքը» էապես կբարդացնի ազգային անվտանգության ապահովման խնդիրները [10]: Արդեն գործադրվող ամերիկյան համաշխարհային նոր համադրությո՞ւթը, որը պահանջում է ներգրավման աստիճանի և ակտիվության անկասելի աճ, մոտակա ժամանակներս անիրագործելի է դարձնում վիետնամական տարբերակով Իրաքից և Աֆղանստանից «ելքի ռազմավարությունը»: Մյուս կողմից՝ մի շարք պատճառներով անհնարին է դառնում *status quo-ի* պահպանումը տարածաշրջանում [11]:

Միաժամանակ, ԱՄՆ ռազմական գերատեսչությունը պարտադիր է համարում նվազագույնը սկզունքորեն տարբեր երկու ռազմական թատերաբեմերում մարտական գործողություններ վարելու ամերիկյան զինուժի ունակությունը: Անշուշտ, իրաքյան պատերազմն էապես խոչընդոտում է ուժային պաշարների կենտրոնացմանը (Իրաքը այսօր կլանում է ամերիկյան բանակի հզորության մոտ 80%-ը, ռազմական բյուջեի 20%-ը)՝ «իսլամական միջուկի երկրներին» (Իրան, Իրաք, Պակիստան, Աֆղանստան) հակազդելու և տարածաշրջանում ռազմավարական նախաձեռնությունը պահպանելու հարցում: Սակայն, ցանկացած պարագայում, ահագնացող ռազմաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում նվազեցնում է հավանականությունը, որ ԱՄՆ-ին կհաջողվի խաղաղ փոխակերպման եղանակով հասնել իր տարածաշրջանային նպատակներին: Իրանի նորընտիր նախագահի 2005թ. հուլիսյան հայտարարությունն այն մասին, թե Թեհրանը կշարունակի իր միջուկային ծրագրերը, այդ ճշմարտության հավելյալ վկայությունն է:

Պարզ է, որ նման լայնածավալ խնդիրների լուծումը պահանջում է ռեսուրսային լուրջ հենք: 2005թ. ԱՄՆ պաշտպանական բյուջեն հատեց \$500 մլրդ-ի սահմանագիծը՝ համաշխարհային ռազմական ծախսերի մոտ 50%-ը: Ֆինանսական ծախսերի արագացված մեծացման արդյունքում ԱՄՆ դաշնային բյուջեի պակասորդը կազմում է ՀՆԱ 3,5%-ը (մոտ \$427 մլրդ): Ֆինանսական շարունակական գերլարումը, ըստ ամենայնի, շուտով երկրնտրանքի առջև կկանգնեցի ամերիկյան ղեկավարությանը՝ կրճատել կամ սոցիալական, կամ ռազմական ծախսերը: Զգալ է տալիս նաև զինվորական անձնակազմի քանակական պակասը. ներկա դրությամբ ԱՄՆ բանակն ունի 33 բրիգադ (1,4 մլն զինճառայող), սակայն ԱՄՆ անվտանգության պարագծի ապահովումը և անդրծովյան ռազմական գործողությունների իրականացումը պահանջում են նվազագույնը հավելյալ ևս 11 բրիգադների կազմավորում: Մյուս կողմից՝ 4 տարի առաջ հայտարարված ծրագիրը ամերիկյան բանակը նորագույն 5-րդ սերնդի սպառազինությամբ ապահովելու մասին, էապես սահմանափակում է բանակին անհրաժեշտ ավանդական սպառազինության գնումների եզրագիծը: Ռազմական բյուջեի մոտ 17%-ն այսօր ծախսվում է

պաշտպանության ոլորտում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու վրա: Բյուջեով նոր տեխնիկա և սպառազինություն ձեռք բերելու համար նախատեսված է մոտ 19%, մինչդեռ զգալի միջոցներ ուղղվում են եղած սպառազինության արդիականացմանը: Ջ.Բուշի վարչակազմն արդեն հայտարարել է, որ ծրագրում է առաջիկա 5 տարվա ընթացքում 85 մլրդ դոլարով կրճատել նոր տեխնիկայի և զենքի գնման ծախսերը [12]:

Չնայած հսկայական ռազմատեխնիկական և տեխնոլոգիական անհամաչափությանը հոգուտ ԱՄՆ-ի, ամերիկյան ռեսուրսները անսահմանափակ չեն. անհրաժեշտ են ինչպես ֆինանսանյութական, այնպես էլ քաղաքական միջոցներ՝ որդեգրված եղանակներով պայքարը շարունակելու համար: Բայց ռազմավարական երկընտրանքն այն է, որ ԱՄՆ ֆիսկալ հնարավորությունները ժամանակի և տարածության մեջ սահմանափակ են, մինչդեռ ներկայիս վարչակազմի և նրա աջակիցների քաղաքական կամքը՝ անկոտրելի ու երկարաժամկետ: Նման պայմաններում անհրաժեշտ է կա մ նորանոր միջոցներ հայթայթել՝ օպերատիվ պահուստը մեծացնելու համար, կա մ ծագած մարտահրավերների բնութիւն համահունչ՝ դիմել պատասխան «ասիմետրիկ» քայլերի: Դատելով վերջին շրջանի զարգացումներից՝ վաշինգտոնյան ստրատեգները հակված են «սինթեզելու» այս երկու մոտեցումները:

Նախ՝ հանրապետական վարչակազմին մոտ կանգնած և ազդեցիկ Գործարարության ամերիկյան ինստիտուտի հայեցակարգային մշակումներում հաստատվում է, որ ԱՄՆ ռազմաօդային և ռազմածովային ուժերը կշարունակեն վարել «ճոճանակի ռազմավարություն»՝ ապահովելով ռազմական ուժի շարժունակությունը երկու ռազմաբեմերի միջև: Հիմնական ուժային ռեսուրսների կենտրոնացման փոփոխականությունը պայմանավորված է լինելու Չինաստանի ռազմական ուժերի և Մերձավոր Արևելքում թե՛ կետերի միջև հավասարակշռություն պահպանելու անհրաժեշտությամբ: Այսօր Արևելյան Ասիայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ԱՄՆ-ը պահպանում և աստիճանաբար հզորացնում է իր առանց այն էլ հսկայական ռազմական ներկայությունը (մասամբ համալրելով այն Եվրոպայից դուրս բերվող ուժերով): Միայն 2002-2004թթ. ԱՄՆ-ը Չինաստանին համեմատաբար մոտ գտնվող Գուամ կղզում տեղակայեց 3 *Los Angeles* դասի սուզանավեր: Չինաստանի ծովային պաշտպանական պարագծի երկայնքը պարելում են նաև արդիականացված «Թրայդենտ» տիպի սուզանավեր, որոնցից յուրաքանչյուրը կրում է 154 «Թոմահավք» թևավոր հրթիռներ՝ վտանգի տակ պահելով չինական ռազմական գլխավոր օբյեկտները: Մովորական զինված բախման դեպքում ԱՄՆ ռազմածովային գերակայությունն ի վիճակի է խափանել Չինաստանի արտաքին առևտուրը և կասեցնել այդ երկրի ռազմանավերի շարժն իրենց հանգրվաններից [13]: Ռամզաօդային ներկայության տարրը նմանապես միտված է Չինաստանի

կողմից որևէ լուրջ հարձակողական գործողության կատարմանը: Սակայն Մերձավորարևելյան տարածաշրջանում սաստկացող իրադրության պայմաններում ԱՄՆ-ը ստիպված է լինելու «հավասարակշռվել» երկու թատերաբեմերի միջև՝ միայն վերջին պահին որոշում կայացնելով լայնածավալ ջախջախիչ հարված հասցնելու մասին [11]:

Միջնաժամկետ հեռանկարում Չինաստանի նկատմամբ ռազմավարական ազդեցության լծակի գործառույթին է ծառայելու նաև Մերձավոր Արևելքում Պեկինի որևէ լուրջ ազդեցության բացառումը: Լավ գիտակցելով, որ Չինաստանի կախվածության աճը մերձավորարևելյան նավթի արտահանումից անխուսափելիորեն հանգեցնելու է չինական շահերի համախմբմանն այստեղ, ԱՄՆ-ը հետևողական քայլեր է ձեռնարկում և կշարունակի ձեռնարկել ապագայում՝ ողջ տարածաշրջանի անվտանգության և զարգացման «վերահսկիչ փաթեթ» իր ձեռքում պահելու ուղղությամբ:

Չինական աճող հզորությունը զսպելուն, ինչպես նաև որոշակի աշխարհաքաղաքական ճնշում գործադրելուն է միտված նաև ամերիկյան ռազմական ներկայությունը հետխորհրդային կենտրոնաասիական հանրապետություններում: Պաշտոնապես Ղրղըզստանում (Մանասի օդանավակայան), Ուզբեկստանում¹ (Խանաբադ) և Տաջիկստանում ամերիկյան ռազմահանգրվանների հայտնվելու փաստը հիմնավորվում է Աֆղանստանի տարածքում հակահաբեկչական գործողությանն օժանդակելու պահանջով: Սակայն ամերիկյան ռազմակայանների հետախուզական կարողությունները և օպերատիվ արձագանքման բարձր պատրաստվածությունը (ռազմաօդային բաղկացուցիչ) Չինաստանի հյուսիսային շրջանների վրա հնարավոր ուժային ճնշում գործադրելու հնարավորություն են ընձեռում:

Հետխորհրդային տարածքում ամերիկյան զինուժի տեղաբաշխումը Չինաստանին հակազդելու մեծ քաղաքականության գուտ «աճանցյալը» չէ: Եվրասիայի կենտրոնական շրջաններում անգլո-ամերիկյան զորքերի առկայությունը, անկասկած, կրում է սեփական, աշխարհաքաղաքականապես «ինքնաբավ» միտվածություն: Այն իրավացիորեն դիտարկվում է ռուսաստանակենտրոն անվտանգության համադրույթի հարթությունում, ինչն ունի պատմական և տրամաբանական հիմնավորվածություն: Որոշ մասնագետների կարծիքով, ամերիկյան ռազմաքաղաքական ակտիվության տեղաշարժը դեպի Եվրասիայի կենտրոնական հատված պայմանավորված է թե՛ Չինաստանի ներքին անկասելի աճով և թե՛ Ռուսաստանի ժամանակավոր թուլացման ավարտով: Մյուս կողմից՝ ընդունվում է, որ ԱՄՆ և իսլամական աշխարհի միջև սկզբունքային տարաձայնությունները վերածվում են միջազգային հարաբերությունների մշտական գործոնի, ինչը նմանապես նպաստում է տարածաշրջանում ռազմական ներկայության պահպանմանը [14]:

¹ Ըստ ամենայնի, ամերիկյան զինուժը դուրս կբերվի Ուզբեկստանի տարածքից 2005թ. տարեվերջին: Պաշտոնական Տաշքենդն այդ պահանջը ներկայացրել է ԱՄՆ զինվորականներին նույն թվականի հուլիսին («Американцы уйдут из Узбекистана «без разговоров», 28.09.2005, www.lenta.ru.)

Կայացած փաստ է, որ հետխորհրդային տարածաշրջանում ԱՄՆ-ը հետապնդում է ռազմավարական և տնտեսական-էներգետիկ լուրջ շահեր, որոնք արտացոլված են թե՛ ամերիկյան պաշտոնական փաստաթղթերում և թե՛ ԱՄՆ վարած գործունեության տրամագծում: Նորանկախ հանրապետությունների անկախության սատարումը և Ռուսաստանի հեգեմոնիստական նկրտումների կանխարգելման ձգտումը նմանապես իրական բովանդակություն ունեն: Սակայն քիչ հավանական է, որ ամերիկյան ստրատեգները հետխորհրդային հանրապետությունների միավորմամբ Ռուսաստանի դեմ արտաքին հավասարակշռության համակարգ ստեղծելու առարկայական ջանքեր գործադրեն:

Նախևառաջ, գոյություն ունի օբյեկտիվ իրողություն. ԽՍՀՄ կազմալուծումից ի վեր մի կողմից՝ ՌԴ, մյուս կողմից՝ մնացյալ բոլոր հանրապետությունների (ներառյալ մերձբալթյան երկրները) ռազմական ծախսերի, բանակների համախառն հզորության և ՀՆԱ ցուցանիշների հարաբերակցությունը որևէ լուրջ փոփոխություն չի կրել: 2000թ. դրությամբ Ռուսաստանին բաժին էր ընկնում բնակչության մոտ կեսը, ՀՆԱ 88,5%-ը, ռազմական ծախսերի 93%-ը, զինված ուժերի անձնակազմի 58,25%-ը [15]:

Հաշվի առնելով այս իրողությունները՝ պարզ է դառնում, որ ՌԴ նկատմամբ կոշտ արտաքին հավասարակշռության քաղաքականությունը կարող է հակառակ արդյունքների հանգեցնել: Ծանր խնդիր է նաև հակառուսաստանյան գաղափարի շուրջ սահմանակից երկրների միավորումը՝ նկատի ունենալով տարաբնույթ բնագավառներում վերջինների կառուցվածքային կախվածությունը Մոսկվայից:

Երկրորդ՝ ԱՄՆ անթաքույց աջակցությունը ԱՊՀ երկրներում մի շարք «հեղափոխական» իշխանափոխությունների իրականացմանը արդյունք է այն բանի, որ դեռ 1990-ական թթ. Մոսկվային չհաջողվեց կազմակերպչական գերակայության փոխակերպել ԱՊՀ տարածքում կայունության երաշխավորի իր գործառնության դերը: Այս հանրապետություններում ինստիտուցիոնալ վերափոխումներ անցկացնելու ԱՄՆ նախաձեռնությունը թեև որոշակիորեն հիշեցնում է ներքին հավասարակշռություն ապահովելու միտում, սակայն առայժմ չի կրում «անշրջելի փոխակերպման» բնույթ:

Երրորդ՝ չի բացառվում, որ Վաշինգտոնը հեռանկարում կփորձի հենց Ռուսաստանին ներգրավել իր շահերի կիրառման ոլորտ՝ առաջարկելով վերջինին «հատուկ փոխգործակցության» մի ձևաչափ, որտեղ, հնարավոր է, հաշվի կառնվի ՌԴ առանձնահատուկ պատասխանատվության գոտու առկայությունը [14]:

Հեռանկարները

Քիչ հավանական է, որ առաջիկայում որևէ առանձին երկիր ի վիճակի լինի ռազմատեխնիկական բնագավառում էապես մրցակցել ԱՄՆ-ի հետ. չափազանց մեծ է ամերիկյան որակական և տեխնոլոգիական առաջնայնությունը ռազմական գործում: Թերևս այս հանգամանքի գիտակցումը, ի թիվս այլ գործոնների, ամերիկյան վարչակազմին առիթ է տալիս թերահավատ լինել քաղաքական դաշնակիցների իրական օժանդակությունը հայցելու և ԱՄՆ միակողմանի գործողություններին «հաղորդակից» դարձնելու հարցում: Այնուամենայնիվ, ֆինանսական և այլ կարգի դժվարությունների աճը, ինչպես նաև ԱՄՆ գլոբալ/տարածաշրջանային հավասարակշռմանն ուղղված մի քանի ուժային կենտրոնների հնարավոր համախմբումն արդեն իսկ ստիպում են վարչակազմին վերանայել դիրքորոշումները: Նման տեղաշարժն առավել արդիական է դառնում Իրաքում, որտեղ ուժային միջոցներով ժողովրդավարության «ներդրման» փուլին հաջորդելու է գալիս պետական ինստիտուտների կառուցման և պարզապես կայունության պահպանման երկարատև շրջանը:

Հաստատագրված ռազմավարական համադրույթի շրջանակում գործելով՝ Վաշինգտոնի համար կոալիցիոն փոխգործակցության վերակտիվացման առավել հարմար և ընդունելի կառույցի դերը շարունակում է խաղալ ՆԱՏՕ-ն: Այսպես, 2005թ. սեպտեմբերին Պենտագոնի պատերից դուրս եկած «Փոխզիջման պայմաններ» փաստաթուղթն ուղղակիորեն հաստատում է ռազմական անվտանգության բնագավառում ԱՄՆ-ի առջև ծառայած խնդիրների փաստը: Ըստ Դ.Ռամսֆելդի մեկնաբանության՝ «անվտանգության ապահովման արդի հիմնախնդիրներն այնպիսի բնույթ են ստացել, որ ԱՄՆ-ը ի վիճակի չէ հասնել հաջողության՝ շարունակելով դրանք միակողմանի լուծելու գործունեությունը: Այս պատճառով փաստաթղթում առաջարկվում է ոչ ավանդական սպառնալիքներին հակազդելու նպատակով նոր գործընկերային հարաբերություններ ձևավորել» [16]: Ինչպես վերև արդեն նշվել է, Պենտագոնի ռազմավարական հայեցակարգը նախատեսում է աշխարհի տարբեր թատերաբեմերում երկու սովորական (*կոնվենցիոնալ*) պատերազմների մղման հնարավորություն: Սակայն, բացի այդ, ամերիկյան բանակը պատրաստ պետք է լինի բուն ԱՄՆ տարածքի պաշտպանությանը, ինչպես նաև ցատկահարթակներ ստեղծելուն (Ամերիկայի մայրցամաքային պարագծից դուրս)՝ աշխարհի չորս մասերում արագ ռազմական ներթափանցման համար: Պարզ է, որ առանց ՆԱՏՕ-ի ռազմատեխնիկական և մարդկային հենքի առկայության՝ ամերիկյան ստրատեգների նախագծերը չափազանց բարդ (եթե ոչ անիրականանալի) կդառնան:

Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ նման զարգացումները դժվար թե հանգեցնեն հետնահանջի «Բուշի դոկտրինում» հռչակված հիմնադրույթներից: Ներկայիս վարչակազմը, անկասկած, գործնական քայլեր կձեռնարկի կան-

խելու Մերձավոր Արևելքում ԱՄՆ ռազմավարական նախաձեռնության թեկուզ մասնակի կորուստը: Այս համատեքստում լուրջ ուշադրության են արժանի միջուկային զենքի օգտագործման բնագավառում ուրվագծվող այն սկզբունքային փոփոխությունները, որոնք շուտով կմտնեն օպերատիվ ծրագրման փուլ:

2005թ. մարտին զինված ուժերի միավորված շտաբների հրամանատարությունը ներկայացրեց վերանայված և խմբագրված «Միացյալ միջուկային գործողությունների դոկտրինի» նախագիծը: Միջուկային ոլորտին վերաբերող այս փաստաթուղթը «ԱՄՆ միջուկային ուժերի համատեղ օգտագործման» վերանայված հիմնադրույթների մի ամբողջություն է՝ ներառյալ «միջուկային զենքի օգտագործման հնարավորության, գործնականության և հետևանքների հաշվառումը»: Վերջին տասը տարիների ընթացքում սա առաջին լուրջ փոփոխությունն է ԱՄՆ միջուկային ռազմավարության մեջ: Առկա տեղեկատվությունից կարելի է որոշ ենթադրություններ անել, թե առաջիկայում ինչպիսին է լինելու ամերիկյան քաղաքականությունն այս հանգուցային ոլորտում:

ԱՄՆ զինված ուժերում, օպերատիվ ծրագրերում, միացյալ միջուկային գործողություններին վերաբերող գլխավոր նորարարություններն են.

1. նախատեսվում է գործողության մեջ դնել այն սկզբունքային դրույթը, համաձայն որի՝ ռազմական գործողությունների թատերաբեմում գործող և առանձին ռազմական խմբավորումների հրամանատարներին իրավունք է վերապահվելու հայցել նախագահի «համաձայնությունը»՝ «կանխարգելիչ» միջուկային հարված հասցնելու համար: Ենթադրվում է, որ այս դրույթը կգործի այն ժամանակ, երբ զանգվածային բնաջնջման զենքի օգտագործմամբ՝ ԱՄՆ-ի, նրան պատկանող ռազմական օբյեկտների կամ ամերիկյան դաշնակիցների վրա հարձակման ապացուցված սպառնալիք առաջանա,
2. համաձայն փաստաթղթի՝ նոր միջուկային զինատեսակներ պետք է ստեղծվեն՝ թաքնված կամ խորքային տեղերում գտնվող թիրախները ոչնչացնելու համար,
3. հավանական է, որ մարտավարական և օպերատիվ-մարտավարական միջուկային զինատեսակները դարձյալ վերադարձվեն բանակային տարբեր ստորաբաժանումներ, մասնավորապես՝ սկսեն տեղադրվել վերջրյա ռազմանավերի վրա [17]:

Հատկանշական է, որ 1960-ական թթ. սկզբին, երբ սրվեց նորագույն շրջանի ամենավտանգավոր ճգնաժամերից մեկը՝ կուբայականը, նախագահ Ջ.Քենեդին մերժեց զինվորականների՝ առանձին թատերաբեմերում գործող ամերիկյան հրամանատարներին որևէ «միջուկային լիազորություն» տրամադրելու առաջարկը [18]: Ժամանակին ամերիկյան քաղաքական գործիչներ-

րը եկան այն եզրակացության, որ նման որոշումը կարող է չկանխատեսված աղետալի հետևանքների հասցնել, ուստի միջուկային զենքի օգտագործման վերաբերյալ որոշումը շարունակեց մնալ միմիայն նախագահի առանձնաշնորհը: Իսկ 1991թ. որոշվեց հանել միջուկային մարտավարական զինատեսակները վերջնա ռազմածովային ուժերի կազմից:

Ուշագրավ է, որ միջուկային նոր քաղաքականությունը կանխամտածված կերպով չի սահմանում և հստակեցնում միջուկային զենքի օգտագործման պայմանները, քանի որ «երկիմաստության պահպանումը նպաստում է հավանական ախոյանի մոտ անորոշության գիտակցության ստեղծմանը, ինչը հետ կպահի նրան թշնամական գործողությունների դիմելուց» [19]:

Վերանայված միջուկային համադրույթի այս նախագծից հնարավոր է գալ այն եզրակացության, որ թեկուզ ռեսուրսային «պակասորդի» պայմաններում քիչ հավանական է, որ ԱՄՆ-ը հրաժարվի իր գերնպաստակներից, որոնք պահանջում են մի կողմից՝ «համապարփակ լուծումներ», մյուս կողմից՝ գործողությունների արագություն և արդյունավետություն: Այս իմաստով առանձնակի մեծ ծախսեր չպահանջող միջուկային զինատեսակների հավանական մուտքը օպերատիվ-գործնական ծրագրման բնագավառ կարող է ազդարարել այլ միջոցներով ուժային քաղաքականության նոր փուլի սկիզբը:

Մեպտեմբեր, 2005թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Генри Киссинджер*, Нужна ли Америке внешняя политика: к дипломатии для XXI века, Москва, Ладомир, 2002.
2. *Global Trends and Global Governance*, ed. by Paul Kennedy, Dick Messner and Franz Nuscheler, Pluto Press, 2002.
3. *Measuring National Power*, Gregory F. Treverton, Seth G. Jones, RAND Corporation, 2005.
4. *Jonathan Monten*, The Roots of the Bush Doctrine: Power, Nationalism, and Democracy Promotion in U.S. Strategy, *International Security*, vol. 29, N4 (spring 2005), pp. 112-156.
5. *Elena Ananieva*, Foreign Policy Polemics in the United States, *International Affairs* (Moscow), 2005, pp. 23-33.
6. *Գազիկ Հարությունյան*, ԱՄՆ ռազմավարության որոշ դրույթները իրաքյան հիմնախնդիրների համատեքստում, «21-րդ ԴԱԸ», # 4, 2004, էջ 112:
7. *Andrew Newman*, Arms Control, Proliferation and Terrorism: The Bush Administration's Post-September 11 Security Strategy, *The Journal of Strategic Studies*, vol.27, N1, March 2004, pp. 59-88.
8. US Nuclear Posture Review, 2001. (<http://www.globalsecurity.org/wmd/library/policy/dod/npr.htm>)

9. *John Davis*, Implications of Preventive Wars for Collective Security, *Mediterranean Quarterly*, Winter 2004, pp. 105-118.
10. *Zbigniew Brzezinski*, Hegemonic Quicksand, *The National Interest*, Winter 2003/2004, pp. 5-16.
11. *Сергей Гриняев*, Приоритеты американской военной стратегии на 2005 год, *Независимое военное обозрение*, # 6 (415), 18.02.2005.
12. *Вадим Соловьев*, Россия и США: чем закончится сюрплас?, *Независимое военное обозрение*, # 5,(414), 11.02.2005.
13. *Robert Ross*, Bipolarity and Balancing in East Asia in *Balance of Power. Theory and Practice in the 21st Century*, ed. by T.V. Paul, James J. Wirtz, and Michael Fortmann, Stanford University 2004, pp. 267-304.
14. *Alexander Bogoturov*, The Time of Central Eurasia, *International Affairs* (Mscow), vol.51, issue 3, 2005, pp.76-84.
15. *William Wohlforth*, Revisiting Balance of Power Theory in Central Eurasia in *Balance of Power. Theory and Practice in the 21st Century*, ed. by T.V. Paul, James J. Wirtz, and Michael Fortmann, Stanford University 2004, pp.214-238.
16. *Владимир Ванин*, Удобное прикрытие для Пентагона, *Независимое военное обозрение*, # 35,(444), 16.09.2005.
17. *Александр Федоров*, Америка готовится к ядерным ударам: Проводится важная корректировка оперативного плана в отношении стран-изгоев, *Независимое военное обозрение*, #25 (435), 8.07.2005; *Владимир Иванов, Игорь Плугатарев*, Вашингтон всех достанет, *Независимое военное обозрение*, # 35 (444), 16.09.2005.
18. *Graham Allison, Philip Zelikow*, Essence of Decision. Explaining Cuban Missile Crisis, Second Edition, Logman, 1999.
19. Doctrine for Joint Nuclear Operations, US Joint Chiefs of Staffs, March 15, 2005, JP3-12.

НОВЫЕ ТЕНДЕНЦИИ В ГЛОБАЛЬНОЙ СТРАТЕГИИ США И ПАРАДИГМА СОВРЕМЕННОЙ СИСТЕМЫ МИРОВОЙ БЕЗОПАСНОСТИ

Ваагн Аглян

Резюме

В статье рассматриваются новейшие тенденции американской глобальной стратегии, основные постулаты «доктрины Буша» в приложении к процессам глобализации и борьбы с международным терроризмом, геополитические приоритеты действующей администрации, а также вопросы, связанные с актуализацией целого ряда доктринальных установок ядерной стратегии в оперативных планах армии США. В частности, в контексте превали-

рующих идеологических аспектов во внешнеполитической концепции США и выработанной Пентагоном новой «матрицы» угроз анализируются главные направления пересмотра «традиционных» подходов США в деле обеспечения национальной безопасности страны, новые стратегические установки американского руководства, направленные на парирование «асимметричных» угроз для США, причины и мотивы отхода администрации Дж.Буша от доктрины сдерживания и практического постулирования «упреждающих действий» по всем азимутам. Учитывая жесткую и, в определенной степени, бескомпромиссную риторику Вашингтона по сохранению за США статуса лидирующей супердержавы, в статье выдвигается тезис о том, что в ближайшей перспективе США приложат существенные усилия для удержания стратегической инициативы в ключевых, динамично изменяющихся регионах мира, при одновременном сдерживании глобальных амбиций Китая.

Вместе с тем ресурсная недостаточность и усиливающееся международное противодействие могут внести значительные коррективы в планы США касательно одностороннего превалирования в мировых процессах. Об этом свидетельствует недавняя реактивизация военно-политических отношений с союзникам по НАТО, предполагающая более тесное подключение альянса к оперативным «проектам» США.

С другой стороны, планируемое в ближайшей перспективе возвращение тактического ядерного оружия в регулярные части американской армии (с «неопределенным» порогом его применения) может иметь трудно предсказуемые последствия. Очевидно, что хотя и грядущие трансформации в ядерной сфере направлены на сокращение/преодоление ресурсного дефицита в реализации глобальных целей США, однако характер ожидаемых контршагов других силовых центров может выйти за рамки международной борьбы с терроризмом.